ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2024թ. **N _____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ Հայկ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Դավթաշեն 2-րդ թաղամասի հ.7/2 հասցեում, տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 108.11քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.03012022-01-0072 վկայական/ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.16/5 հասցեին հարող տարածքում՝ տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 108.11քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Հայկ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Դավթաշեն 2-րդ թաղամասի հ.7/2 հասցեում, Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 108.11քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.03012022-01-0072 վկայական/ փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.16/5 հասցեին հարող տարածքում՝ տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող 108.11քմ մակերեսով հողամասի հետ:

Դավթաշեն 2-րդ թաղամասի հ.7/2 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Հայկ Խաչատրյանին պատկանող հողամասը ծանրաբեռնված է անավարտ շինությամբ և իր տեղադիրքով գտնվում է Դավթաշեն 2-րդ թաղամասի հ.7/1 հասցեում տեղակայված «Երևանի հ.59 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հարևանությամբ՝ ամբողջովին կանաչ տարածքում:

Գույքի սեփականատերը դիմել է Երևանի քաղաքապետարան շինության արդիականացման և վերակառուցման թույտվություն ստանալու նպատակով, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինությունը գտնվում է կանաչ տարածքում, քաղաքաշինական փաստաթղթեր չեն տրամադրվել:

Հաշվի առնելով նշված հանգամանքները, սեփականատիրոջն առաջարկվել է փոխանակել քննարկվող հողամասը Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.16/5 հասցեին հարող տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող նույն մակերեսով հողամասի հետ՝ այդպիսով հնարավորություն տալով տնօրինել սեփական գույքը, ինչպես նաև քանդել սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում առկա շինությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դավթաշեն 2-րդ թաղամասի հ.7/2 հասցեում գտնվող կիսակառույց շինությունը քանդվելու է, իրականացվել է հողամասերի շուկայական արժեքների գնահատում: Մասնագիտական որակավորում ունեցող «ԱԲԻՏ» ՍՊ ընկերության կողմից տրամադրած եզրակացության համաձայն՝ Դավթաշեն 2-րդ թաղամասի հ.7/2 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Հայկ Խաչատրյանին պատկանող հողամասի շուկայական արժեքը կազմում է 14.800.000 ՀՀ դրամ, իսկ փոխանակման համար առաջարկվող համայնքային սեփականություն համարվող Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.16/5 հասցեի հարևանությամբ գտնվող հողամասի շուկայական արժեքը՝ 15.200.000 ՀՀ դրամ: Սեփականատիրոջ կողմից ներկայացվել է համաձայնություն տարբերություն կազմող 400.000 ՀՀ դրամը վճարելու վերաբերյալ:

Համաձայն հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի փոխանակումը դրանց օգտագործման

արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվում է համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**